նը հաւաքեն։ Հաւաքում են եւ հեռանում։ Ապա մի վայրկեան դուրս գալով, իսկոյն ետ է վազում եւ կոծկուելով կպչում է վարագոյրին։)

ՁՕՐԱՎԱՐ.– (Ներս վազելով) Ո՞ւր է թագաւոր քաջը։ Ամբողջ զօրքը լքել է ռազմադաշտը ու ետ է գալիս։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Գերագոյնը նարգիլէ է խնկարկում ի պէտս հայրենեաց։

ՁՕՐԱՎԱՐ.– Շուտափոյթ պէտք է յայտնել իրեն։ Եւ քանի որ թագաւոր քաջը մահուան սպառնալիքով արգելեց մեզ իր հետ խօսել զօրքից եւ պատերազմից, շատ կաղաչէի, որ ի սէր հայրենեաց, ինքդ հանձն առնէիր այդ մահը։ Յայտնի՛ր թագաւորին լուրը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Անպատճառ։ Իմ անձը հենց հայրենիքի համար եմ պահել, որ զոհեմ։ Միայն իսկոյն չեմ կարող լուր յայտնել, քանի որ Գերագոյնը հենց նոր աւարտեց նարգիլէի առաջին կրակը։ Երկու կրակ եւս կաւարտի, եւ ես կյայտնեմ։

ՁՕՐԱՎԱՐ.– Ուրեմն հուսամ քո անձնուիրութեան վրայ։ Տէ՛ր իմ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Կատարելապէս, Տէ՛ր իմ։

ՁՕՐԱՎԱՐ.– (Գնում է։)

Ներս են մտնում նազիրը եւ վեզիրը

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ.– (Գլուխ տալով) Սենեկապետին։) Տէր ի՛մ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Գլուխ տալով) Տէր ի՛մ,

ՆԱԶԻՐ.– Յուսանք, որ նոր լուրերը յայտնել ես արքային։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ինձ ոչինչ յայտնի չէ։ Դուք որեւէ բա՞ն գիտէք, տեարք իմ։

ՆԱԶԻՐ.– Կատարելապէս ոչինչ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ուրեմն ի՞նչ նոր լուր է տեարք։

ՎԵԶԻՐ.– Ներիր, տէր իմ։ Կարծես նոր լուր ասիր։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ոչ, պարզապէս սայթաքումն բարբառի։

ՆԱԶԻՐ.– Եւ ի՞նչ է քեզ յայտնի, տէր ի՛մ,

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ականջս խուլ է եւ ինքս այնքան մտազբաղ… (Լռութուն) Իսկ…

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ.– Հա՛…

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Բա՞ն ասիք, տեարք։

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ.– Ոչինչ։

ՎԵԶԻՐ.– Ի՞նչպէս է քո կենցաղավարութիւնը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Գերերջանիկ։ Աստուած պահէ թագաւորին։ (Լռութիւն) Առո՞ղջ էք, տեարք։

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ.– Կատարելապէս տէ՛ր իմ։